

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ Ռ(Ր) ԵՎ Ր(R) ՁԱՅՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ 
Երևանի պետական համալսարան

Գրաբարյան հայերենի $n(r)$ և $p(r)$ ձայնորդները հնչությանին (= իմաստատարբերակիչ) գործառույթ են իրականացրել ոչ միայն բառամիջի և բառավերջի դիրքերում, որն ընդունել են նաև նախորդ ուսումնասիրողները (Է. Աղայան, Է. Թումանյան, Հ. Մուրադյան), այլև բառասկզբի դիրքում: Բառասկզբի՝ որպես $n(r)$ -ի և $p(r)$ -ի համար հնչությանին դիրքի բացառումը վերջինները հիմնավորել են նրանով, որ բնիկ հայկական բառերը և հին փոխառությունները չէին կարող սկսվել $n(r)$ -ով և $p(r)$ -ով. դրանք, իբրև կանոն, ստացել են *նախահավելական մասնիկ*: Բացառություն էին բնիկ հնդեվրոպական *ռունգն* (< **srungʰ*-) բառը և իրանական որոշ փոխառություններ (*ռազմ*, *ռահվիրայ*, *ռամիկ*, *ռոճիկ*, *ռոտաստակ*): Նախ՝ համաժամանակյա հայեցակերպում հնչյոթների տարբերակման առումով կարևոր չէ՝ այն հանդիպում է բնիկ, թե փոխառյալ բառերի կազմում, ապա՝ նույնիսկ մի քանի բառում տարբերակիչ գործառույթով հանդիպելիությունը բավարար է նրա հնչությանին կարգավիճակը ճանաչելու համար: Այդ առումով բոլոր հիմքերը կան ասելու, որ $n(r)$ -ն և $p(r)$ -ն լիարժեք հնչությանին գործառույթ են իրականացրել նաև բառասկզբի դիրքում: Ըստ այդմ, նրանց միջև ոչ մի դիրքում չէին կարող լինել *այլահնչակային* հարաբերություններ: $\text{R}(r)$ -ի և $\text{p}(r)$ -ի հերթագայելիությունը որոշ բառարմատների (= հիմնական ձևայինների) դիրքային տարբերակներում (= ձևակներում) հիմք է տալիս խոսելու նրանց միջև նաև *ձևահնչությանական* հարաբերությունների, հետևաբար՝ նաև R/r (< R/r >) *ձևահնչության*ի գոյության մասին: Առանձին դեպքում կարող է խոսք լինել նաև $n(r)$ -ի և $p(r)$ -ի միջև թույլ արտահայտված *ազատ փոփոխական* հարաբերությունների մասին:

Բանալի բառեր – *հնչույթ, հնչությանական դիրք, այլահնչակ, լրացուցիչ բաշխում, ազատ փոփոխական, ձևահնչույթ*

Վարդան Պետրոսյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

Вардан Петросян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

Vardan Petrosyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ vz.petrosyan@mail.ru <https://orcid.org/0000-0002-6141-5504>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 22.04.2025

Գրախոսվել է՝ 28.04.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

Հին գրական հայերենի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը, ըստ էության, սկսվել է Դ. Թրակացու «Քերականական արվեստ» երկի թարգմանություններով՝ մ.թ. V դ. կեսերից¹, սակայն հնչյութաբանական ուսումնասիրությունը սկսվում է միայն 20-րդ դ. կեսերից՝ Է. Աղայանի «Գրաբարի քերականություն. հնչյունաբանություն» արժեքավոր աշխատությամբ (Եր., 1964), որը գրաբարյան հայերենի հնչյութաբանության՝ համաժամանակյա հայեցակերպով գրված առաջին ամբողջական ուսումնասիրությունն է։ Պրոֆ. Աղայանից հետո գրաբարի հնչյութաբանության հարցերին անդրադարձել են Է. Թումանյանը «Հին հայերեն» (Մ., 1971)², ապա Հ. Մուրադյանը «Հայոց լեզվի պատմական քերականություն. հնչյունաբանություն» աշխատություններում (Եր., 1982)³։ Ուստի մեզ հետաքրքրող հիմնախնդրի՝ գրաբարյան հայերենի *ռ* (ր) և *ր* (ռ) թրթռուն ձայնորդների հնչյութաբանական բնութագրերի համաժամանակյա քննությունը կսկսենք հենց նշված հեղինակների առավել կարևոր մտքերին անդրադարձով։ Ըստ այդմ.

1. Չնայած այն իրողությանը, որ գրաբարի բառարանները ներառում են *ր* (ռ)-ով և հատկապես *ռ* (ր)-ով սկսվող բառերի ընդարձակ ցանկեր, ըստ Հ. Մուրադյանի՝ բառակիրգրը «երկուսի համար էլ բացառված դիրք էր»⁴, իսկ Է. Աղայանի կարծիքով՝ այդ դիրքը բացառված էր միայն *ր* (ռ)-ի համար (հմտ. «Բառակիրգրում իբրև կանոն *ր* լինել չի կարող»⁵)։ Իհարկե, պրոֆ. Աղայանը հատուկ շեշտում է՝ «դասական գրաբարում»⁶, այն է՝ V դարում։

Գրաբարյան հայերենի *ռ* (ր) և *ր* (ռ) ձայնորդների առնչությամբ Է. Թումանյանի պատկերացումներն առավելապես համահունչ են Է. Աղայանի տեսակետներին⁷։

Նրանց հիմնավորումներն ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին. 1) Ինչպես բնիկ հայերեն բառերում, այնպես էլ փոխառություններում *ր*-ից առաջ միշտ եղել է նախահավելական մասնիկ (աուգմենտ)՝ *ա* (*ա*) կամ *ե* (*ե*)։ Գրաբարյան մատյաններում *ր*-ով սկսվող բառերը, եթե արհեստական կազմություններ

¹ Տե՛ս **Ջահուկյան, Գ.** Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 51։

² Հմտ. **Туманян, Э.** Древнеармянский язык. М., 1971։

³ Եթե Է. Աղայանի «Գրաբարի քերականություն. հնչյունաբանություն» և Է. Թումանյանի «Հին հայերեն» աշխատությունները գրաբարյան հայերենի նկարագրական (= համաժամանակյա) ուսումնասիրություններ են, ապա Հ. Մուրադյանի «Հայոց լեզվի պատմական քերականություն. Հնչյունաբանություն» հատորը, ինչպես երևում է նաև վերնագրից, ամբողջության մեջ պատմական հայեցակետով իրականացված քննություն է. այստեղ հայերենի հնչաբանական իրողությունները դիտարկվում են՝ ելակետ ունենալով գրաբարյան շրջանը՝ 5-րդ դ., և հասնում են մինչև 20-րդ դ.։ Բուն գրաբարյան շրջանի իրողություններն առանձին վերցրած ունեն նկարագրական բնույթ, քանզի չեն դիտարկվում նախագրաբարյան շրջանի հետ զուգահեռների մեջ։

⁴ **Մուրադյան, Հ.** Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Եր., 1982, էջ 219։

⁵ **Աղայան, Է.** Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 184։

⁶ Նույն տեղում, էջ 185։

⁷ Տե՛ս **Туманян, Э.** նշվ. աշխ., էջ 65-66։

չեն, ըստ ամենայնի, նախապես ունեցել են նախահավելական հնչյուն, որն ընկել է (հմմտ. *րախ*՝ եղել է *ռ-րախ*, այդպես էլ՝ *րազարդ*՝ *հ-րազարդ*, *րախճանք*՝ *խ-րախճանք*, *րակերպ*՝ *հ-րակերպ*, *րակերտ*՝ *հ-րակերտ*, *րահետ*՝ *ա-րահետ*, *րամ*՝ *ե-րամ* և այլն). 2) Ր սկիզբով ձևերը ենթադրաբար հետագա սխալ գրչությունների արդյունք են կամ էլ, թերևս, բանաստեղծական սկզբունքները պահպանելու (աքրոստիկոսի առաջին բառը կազմելու) նկատառումով արհեստական կազմություններ: Բացառություն է *րոպե* բառը, որը հունական փոխառություն է՝ *ροπή*, և գործածվել է անփոփոխ կերպով⁸. 3) Ր սկիզբով բառերից միայն մեկն է բնիկ հայկական՝ *ռունգն*, մյուսները իրանական կամ հունական փոխառություններ են, բայց և այնպես, դրանք «սովորական են դասական գրաբարի համար». դրանցից են՝ *ռազմ*, *ռահվիրայ*, *ռամիկ*, *ռոճիկ* և այլն⁹. 4) Թեև դասական հայերենում բառը կարող էր սկսվել *ռ*-ով, իսկ *ր*-ով՝ ոչ, դա հիմք չի տալիս նրանց միջև հարաբերությունները բնորոշելու որպես ենթահնչույթային. *ռ*-ն և *ր*-ն ինքնուրույն հնչույթներ էին¹⁰:

2. Ըստ իս՝ լեզվական փաստերի համակողմանի քննությունը ոչ միշտ է վկայում հոգուտ նշված տեսակետների: Այսպես.

Ր (r) և ր (r) ձայնորդները հանդիպում են բոլոր երեք դիրքերում.

1) բառասկզբում (հմմտ. *ռաբբունի* «Տե՛ր իմ, վարդապե՛տ իմ», *ռազմիկ* «մարտիկ», *ռահվիրա* «ճանապարհ հարթոդ», *ռամիկ* «հասարակ ժողովուրդ», *ռետին* (-տնի) «խեժ, բալասան», *ռետոր* «հռետոր», *ռոճիկ* (-ձկի) «թոշակ», *ռոշնական* «պայծառ», *ռունգն* «քիթ», *ռուպ* (/ռուփ) «մածուն», *րաբունական* «վարդապետական», *րախարար* «ուրախարար», *րախճան* «խրախճանք», *րահիրար* «վազեվազ», *րամ* «ժողով», *րաւորոս* «գավազան, ցուպ», *րոպ* «2. շրջանակ, ոլորք», *րոպե* «ակնթարթ. տիեզերք», *րաւտեմ* «ժողովել, միաբանել» և այլն).

2) բառամիջում (հմմտ. *առակել* «առակով խոսել», *զեռալ* «սողալ, խլրտալ», *նեռն* (-ոին) «վերջին սուտ մեսիան», *սառն* (-ոին) «սառույց», *վառել* «բոցավառել. զինել», *երագ* «արագ, թեթև», *զրահել* «զրահով ամրացնել», *ներածել* «ներսերել», *սարակ* «փոքր սար», *վարել* «հողը հերկել» և այլն).

3) բառավերջում (հմմտ. *բառ* «բառ», *գայռ* «գարշահոտ տիղմ», *հեռ* «վեճ, կռիվ», *վառ* «լուսավոր», *արար* «արեցիր» (*առնել*-ի «անել, կատարել» անց. կատ., եզ. թ., 3-րդ դ., նրգ. խոնրհ.), *եղար* «ամուսնացած կին», *զար* (/զոր) «գորք», *վաղր* «կարճ թուր», *վար* «հերկած հող» և այլն):

3. Ր (r) և ր (r) ձայնորդներն իմաստատարբերակիչ (= հնչույթաբանական) գործառույթ են իրականացրել բոլոր երեք դիրքերում, այլ ոչ թե միայն բառամիջի և բառավերջի, ինչպես որ նշել են Է. Աղայանն ու Հ. Մուրադյանը: Եթե բառամիջի և բառավերջի դիրքերում նրանք հնչույթաբանական հակադրությ-

⁸ Տե՛ս Մուրադյան, Հ. նշվ. աշխ., էջ 219, Աղայան, Է. նշվ. աշխ., էջ 185:

⁹ Տե՛ս Աղայան, Է. նշվ. աշխ., էջ 185, Туманян, Э. նշվ. աշխ., էջ 66:

¹⁰ Տե՛ս Туманян, Э. նույն տեղում:

յուններ են ձևավորել ինչպես այլ հնչույթների, այնպես էլ մեկը մյուսի հետ, ապա բառասկզբի դիրքում այդպիսի հակադրություն են ձևավորել միայն այլ հնչույթների հետ: Այլ կերպ՝ բառասկզբում $n \sim p$ հակադրություն չի եղել: Ընդ որում՝ նշված ձայնորդներից n ($\dot{r}$)-ն բառասկզբի դիրքում հնչույթաբանական հակադրություն է ձևավորել զգալի թվով հնչույթների հետ, ի տարբերություն p (r)-ի, որի հնչույթաբանական գործառնությունն այդ դիրքում խիստ սահմանափակ է: Հմմտ. 1) բառասկզբի դիրքում. ա) $n \sim$ **այլ հնչույթ** (հմմտ. *ռահ* «ճանապարհ» $\sim$ *բահ* «բահ» $\sim$ *գահ* «բարձր դիրք» $\sim$ *կահ* «սպասք, կարասի» $\sim$ *ճահ* «պատշաճ, հարմար» $\sim$ *սահ* «գունդ, բանակ» ($n \sim p \sim q \sim \dot{d} \sim \dot{y}$), *ռայ* «բազմություն, հանդես» $\sim$ *բայ* «թե, որ. արդարև» $\sim$ *ճայ* «որոր. արագիլ» ($n \sim p \sim \dot{d}$), *ռահ* «ճանապարհ» $\sim$ *գահ* «բարձրադիր աթոռ» $\sim$ *կահ* «սպասք, կարասի» ($n \sim q \sim \dot{y}$), *ռամ* «կախարդություն» $\sim$ *գամ* «-ու/ոյ» «ելք, միջոց» $\sim$ *տամ* «տալիս եմ» (*տալ* «հանձնել, վճարել» բայի սահմ. նրկ., եզ. թ., 1-ին դ.) $\sim$ *ծամ* «երկար մազեր» ($n \sim q \sim \dot{d}$), *ռատ* «տեր» (որպես մոգպետաց մոգպետի մակդիր) $\sim$ *հատ* «հատելը. հատիկ» $\sim$ *վատ* «անպիտան. չար» ($n \sim h \sim \dot{v}$), *ռետին* «խեժ, բալասան» $\sim$ *գետին* «հող» $\sim$ *հետին* (*հետի*-ի «ոտքով գնացողը. հետիոտներ» որոշյալ առումը) ($n \sim q \sim h$), *ռիշտ* «կծծի, ագահ» $\sim$ *միշտ* «անընդհատ. ամեն անգամ» $\sim$ *վիշտ* «ցավ, տառապանք» ($n \sim m \sim \dot{v}$), *ռումբ* «պարսաքար» $\sim$ *խումբ* «բազմություն» ($n \sim \dot{h}$), *ռունգն* «քիթ. դռան փեղկ» $\sim$ *ունգն* (*ունգ*-ի «մղեղ, փոշենման հարդ» որոշյալ առումը) ($n \sim \emptyset$)). բ) $p \sim$ **այլ հնչույթ (զրո հնչույթ)** (հմմտ. *քուպ* $\sim$ *ցուպ* $\sim$ *հուպ* ($p \sim g \sim h$), *քամաք* $\sim$ *ցամաք* «չոր. ցամաքած» ($p \sim g$)), այնպես էլ հնչույթային զրոյի հետ (հմմտ. *քոտին* «նվաստ» $\sim$ *մրոտին* «մրոտում են». *մրոտիմ*-ի «մրոտվել» սահմ. նրկ., հզն. թ., 3-րդ դ. ($\emptyset \sim m$)).

2) բառամիջի դիրքում. $n \sim p$ (հմմտ. *առու* «առու» $\sim$ *արու* «արու», *բառի* (*բառի* եզ. թ., սեռ. տր. հլ.) $\sim$ *բարի* «-ույ» «լավ, ազնիվ», *բառք* «բառեր» $\sim$ *բարք* «բնավորություն, վարք», *դառն* «-ոին» «տհաճ համ ունեցող» $\sim$ *դարն* (*դար*-ի «բարձր տեղ» որոշյալ առումը), *ծռել* «ծուռ դարձնել» $\sim$ *ծրել* «ծրագրել»¹¹, *կռունկն* «կռունկ, խորդ» (*կռունկ*-ի որոշյալ առումը) $\sim$ *կրունկն* «գարշապար»¹², *ոլռոն* «ոլռոի ունդը» $\sim$ *ոլորն* (*ոլոր*-ի «ոլորվածք. պրկում» որոշյալ առումը), *սառն* «սառույց» $\sim$ *սարն* (*սար*-ի «-ոյ» «լեռան գագաթ» որոշյալ առումը) և այլն).

3) բառավերջի դիրքում. ա) $n \sim p$ (հմմտ. *ապուռ* «ավար, կողոպուտ» $\sim$ *ապուր* «փրկություն. ապրելը», *բառ* «բառ» $\sim$ *բար* «որդի. հաստ. դուռ»¹³, *գայռ* «ցեխ, աղբ» $\sim$ *գայր* «(նա) գալիս էր» (անց. անկ. ժ., եզ. թ., 3-րդ դ.), *դեռ* «դեռևս, տակավին» $\sim$ *դեր* «փոխանակ» (նխածնց), *լուռ* «-ի» «լռիկ, անխոս» $\sim$ *լուր* «-ոյ»

¹¹ Տե՛ս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲՀԼ), Անթիլիաս, 1988, էջ 412:

¹² Բառարաններում կա նաև *կրուկ*, *կրուկն* (սեռ.-տր. *կրկան*) տարբերակներով (տե՛ս ԱԲՀԼ, էջ 456, **Ղազարեան, Ռ.** Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Անթիլիաս, 2004, էջ 681):

¹³ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազնեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, էջ 440, ԱԲՀԼ, էջ 170, **Աճառյան, Հ.** Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), հ. 1, Եր., 1971, էջ 418, **Ջահուկյան, Գ.** Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՋՄԲ), Եր., 2010, էջ 119:

«լսելը, լսողություն», *հեռ* (-ի/-ոյ) «հակառակություն, դիս» ~ *հեռ*-(ու) «անցած տարի», *ձառ* «ծուռ, տգեղ, կոշտ» ~ *ձաք* (-ի) «մազ, մազեղեն», *ճառ* «ասացված, խոսք» ~ *ճաք* «հնարք. դարման», *մուռ* «լուռ ու մունջ լսող» ~ *մուք* (-ոյ) «ծխի մրուրը», *ռառ* «հետույք, նստատեղ» ~ *ռաք* «որտեղ» (հարցահարաբերական դերանուն), *սեռ* (-ի) «ազգ, ցեղ, տոհմ» ~ *սեք* (-եմ) «աճել, սնուցանել», *վառ* «լուսավոր, փայլուն» ~ *վաք* «հերկած հող», *քառ* (-ի) «չորս» ~ *քաք* (-ի) «1. կարծր ապար, 2. ակ» և այլն). բ) *ռ* / *ր* ~ *այլ հնչույթ* (հմմտ. *աշխար* (-ել) «լաց, ողբ» ~ *աշխատ* «հոգնություն» (ր ~ տ), *բոյք* ~ *բոյն* (սեռ.-տր. *բունոյ*) «թոշունի բույն» ~ *բոյծ* «սնուցում» (ր ~ ն ~ ծ), *մոյք* (-ոյ) «մուրացկանություն» ~ *մոյկ* «կոշիկ» ~ *մոյն* «բարեձևություն» (ր ~ կ ~ ն) և այլն):

4. Համաժամանակյա հայեցակերպում *ռ* (r) և *ր* (r) ձայնորդների հնչույթաբանական քննության առնչությամբ պիտի նկատի ունենալ հետևյալը.

Ա) Ասել, թե բնիկ հայկական (= հնդեվրոպական ծագման) բառերում և հին (նախագրաբարյան ?) փոխառություններում բառասկզբի դիրքը բացառված էր *ռ* (r)-ի և *ր* (r)-ի համար, նշանակում է հարցի քննությունը տեղափոխել տարածամանակյա հայեցակերպ: Գրաբարյան փուլի համաժամանակյա նկարագրությունը չի կարող շրջանցել այն իրողությունը, որ բառասկզբի դիրքում այդ հնչույթները ներկայություն էին՝ 1) եբրայական (հմմտ. *ռաք*(*p*)/ի «վարդապետ», *ռաքբունի* «տե՛ր իմ, վարդապե՛տ իմ», *ռասիմ* «սուրհանդակ», *ռափայ* «հսկա» և այլն), 2) իրանական (հմմտ. *ռահ* «ճանապարհ», *ռազմ* «պատերազմ», *ռամիկ* «հասարակ ժողովուրդ. գոեհիկ», *ռատ* «գլխավոր», *ռոճիկ* «օրավարձ», *ռոշն* «լուսավոր», *րասդոն* «հմուտ», *րոտին* «նվաստ», *րուճանակ* «ավետավոր» և այլն) և 3) հունական (հմմտ. *ռակ*(*γ*)/այ «հիմար, տխմար», *ռաքիա* «ալիքի պատովելը (ծովափին զարկվելիս)», *ռետին* «խեժ, խունկ», *ռոյիկեան* «ոյուցանական», *րաւդոս* (/րոդոս) «զավազան, ցուպ», *ռեփանին* «բողկ», *րոպէ* «ակնթարթ, վայրկյան» և այլն) փոխառություններում¹⁴, որոնք, անկախ իրենց կիրառության հաճախականությունից, այլևս հայերենի բառապաշարի մաս էին կազմում: Ավելին, *ռ* (r)-ն բառասկզբի դիրքում այլ հնչույթների հետ ձևավորել է մեծ թվով գործառական հակադրություններ, իսկ դա լիովին բավարար է նրա համար բառասկզբի դիրքը ևս համարելու հնչույթաբանական¹⁵:

Բ) Եթե նույնիսկ ընդունենք, որ *ր* (r)-ով սկսվող բառերի մեջ քիչ չէին արհեստական կազմությունները, որոնց մասին նշում են Է. Աղայանը և Հ. Մուրադյանը (հմմտ. *րազարդ* – *հրազարդ*, *րախ* – *ուրախ*, *րահետ* – *արահետ* և

¹⁴ Նշված փոխառությունների համար տե՛ս Աճառյան, Հ. ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 137-149, 443-445, նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 28, 32, Հյուբշման, Հ. Հայերենի քերականություն (այսուհետև՝ ՀԲ), Եր., 2003, էջ 9-398, Զահուկյան, Գ. ՀԱԲ, Եր., 2010, էջ 655-659, 739:

¹⁵ Ի դեպ, համաժամանակյա հայեցակերպում («սինխրոնիայում») Է. Աղայանը ևս ընդունել է *ռ*-ով սկսվող բառերի փաստը (տե՛ս Աղայան, Է. նշվ. աշխ., էջ 185 (ծնթգր. 1)):

այլն), այնուամենայնիվ, դրանցից բացի, կային նաև հունական (*բուպե* «ակն-թարթ, վայրկյան»), իրանական (*բաստրոն* (*/ռասդիոն*) «հմուտ», *բոտին* «նվաստ», *բուճանակ* «ավետավոր») և արաբական (*բամաթ* «մի տեսակ դեղ», *բուպ* II. (*/ռուպ*) «մեկ քառորդ») փոխառություններ¹⁶, որոնցից մի մասի բառակզբի *բ*-ն, ինչպես տեսանք, գործառական հակադրություններ է ձևավորել ինչպես տարբեր հնչյոթների, այնպես էլ հնչյոթային զրոյի հետ: Էլ չենք խոսում այն մասին, որ իրական կարող է լինել նաև չստուգաբանված բառերի մի մասը (հմմտ. *բաթ* «ուժ, գորություն», *բոտել* I. «խնդրել, աղաչել» և այլն)¹⁷, որոնք նույնպես չպիտի անտեսել *բ* (*r*)-ի հնչյոթաբանական բնութագիրը քննելիս: Հայտնի է, որ եբրայական և հունական փոխառությունների մի զգալի մաս հայերենին է անցել Ս. Գրքի առաջին թարգմանության միջոցով, հետևաբար՝ դասական գրաբարի շրջանում (V դ.): Եթե անգամ այդ փոխառությունները վերաբերում են ետդասական շրջանին, միևնույնն է՝ գրաբարյան փուլի իրողություններ են, ըստ այդմ՝ չեն կարող անտեսվել գրաբարի համաժամանակյա քննության դեպքում:

Գ) *Ռ* ((*r*))-ով են սկսվել՝ 1) հ.-ե. ծագման առնվազն մեկ բառ՝ *ռունգն* (< **srungʰ-*) «քիթ»¹⁸, որը, հակառակ գործող սկզբունքի, ըստ որի՝ *ռ*-ով և *բ*-ով սկսվող բնիկ հայկական բառերը, որպես կանոն, *ռ*-ից և *բ* (*r*)-ից առաջ ստացել են նախահավելական մասնիկ (հմմտ. **rēu-gʰ* (?) > *առեւծ* «առյուծ», **rū-n-* // **rēu-* > *ռննալ* «ձայն հանել (անասունների մասին)», **rei-k-* «ձող» > *առիք* «առաստաղ» (?), **ru-g-* > *ռծկ(կ)ալ* «ործկալ, փսխել», **rey-* > *առել* «արև», **regʷos-* «մութ, խավար» > *էրեկ* «երեկո, երեկ» և այլն), այդպիսի մասնիկ չի ստացել¹⁹, 2) իրանական որոշ փոխառություններ (հմմտ. *ռազմ* «պատերազմ», *ռահվիրայ*, *ռամիկ*, *ռոճիկ*, *ռոտաստակ* «գլխավոր քաղաք»), որոնք կատարվել են նախագրաբարյան շրջանում²⁰, նույնպես նախահավելական մասնիկ չեն ստացել: Այլ կերպ՝ նախահավելված ստանալու սկզբունքը, որքան էլ տարածված, այնուամենայնիվ, բացարձակ չէր կամ էլ սկսել էր խանգարվել դեռևս նախագրաբարյան ինչ-որ փուլում:

Վերոհիշյալ քննությունը հիմք է տալիս ասելու, որ գրաբարյան հայերենում

¹⁶ Տե՛ս Աճառյան, Հ. ՀԱԲ, հ. IV, էջ 443-445, Զահուկյան, Գ. ՀԱԲ, Եր., 2010, էջ 739:

¹⁷ Տե՛ս Աճառյան, Հ. ՀԱԲ, հ. IV, Զահուկյան, Գ. ՀԱԲ:

¹⁸ Տե՛ս Հյուբշման, Հ. ՀԲ, էջ 486, Աճառյան, Հ. ՀԱԲ, հ. IV, էջ 147-148, Զահուկյան, Գ. ՀԱԲ, էջ 658:

¹⁹ Հիմք ընդունելով *ռունգն* բառի՝ ձեռագրերում հանդիպող նաև *բունգն* ձևը՝ Է. Աղայանը ենթադրում է, որ «դասական հայերենում էլ *ռ*-ով սկսվող բառերն ունեին *բ* ձայնավոր հենարանը» (Աղայան, Է. նշվ. աշխ., էջ 186): Այս վարկածը, ըստ իս, հատկապես դասական հայերենի դեպքում հավանական չէ, որովհետև *բ*-ն հին հայերենում նախահավելական մասնիկի գործառույթ չի ունեցել: Ավելի հավանական է, որ *բունգն* ձևը ձեռագրերի մեջ թափանցել է հետագա՝ միջինհայերենյան գրչությունների ընթացքում՝ բառի խոսակցական (= բարբառային) տարբերակների ազդեցությամբ:

²⁰ Տե՛ս Զահուկյան, Գ. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԼԺ), Եր., 1987, էջ 542:

n (ր)-ն և *p* (ր)-ն ինքնուրույն հնչույթներ էին և հնչույթային կարգավիճակը պահպանել են հնարավոր բոլոր երեք դիրքերում:

5. *Ռաբբի* «վարադապետ, ուսուցիչ» - *ռաբբի* (նույնը), *ռաբ(բ)ունի* «վարդապետ իմ, տե՛ր իմ» - *ռաբունի* (նույնը), *ռահվար* «արագընթաց ձի» - *րահվար* (նույնը) բառային տարբերակների առկայությունը²¹ կարող է հիմք տալ *n* (ր)-ի և *p* (ր)-ի միջև, հակադրական (= հնչույթաբանական) հարաբերություններից բացի, տարբերակելու նաև *ազատ փոփոխական* (*free variation* / *свободное варьирование*) հարաբերություններ: Առաջին երկուսը՝ *ռաբբի* (/րաբբի/), *ռաբ(բ)ունի* (/րաբունի/), եբրայական փոխառություններ են²², համապատասխանաբար՝ *rabbi*, *rabbōnī* / *ribbōnī* ձևերից: Դրանք միջնորդավորված են «յն. *רַבִּי* տառադարձությունից»²³ և, ըստ ամենայնի, հայերենին անցել են Աստվածաշնչի՝ հին հունարենից կատարված թարգմանության միջոցով: *Ռահվար* (/րահվար/)-ը փոխառություն է իրանական *rahvār* ձևից²⁴ և մեծ հավանականությամբ հայերենին է անցել բանավոր խոսքի (= խոսակցական լեզվի) միջոցով: Երկու տարբեր ճանապարհներով լեզվին անցած բառերում տեղի ունեցած միատեսակ հնչյունական փոփոխությունը, որը հանգեցրել է բառային տարբերակների առաջացման, տրամաբանորեն պիտի ունենար ընդհանուր պատճառ, սակայն, ըստ իս, այս դեպքում դժվար է նման պնդում անելը, որովհետև եթե հավանական է *ռահվար* (/րահվար/)-ի գործածությունը գրավոր խոսքում, ապա հավանական չէ *ռաբբի* (/րաբբի/), *ռաբ(բ)ունի* (/րաբունի/) բառերի գործածությունը ժողովրդախոսակցական լեզվում՝ վերջինների խիստ-գրքային բնույթի և նեղուղորտային կիրառության պատճառով: Բացի այդ, ընդհանուր պատճառի (համաբանության ?) դեպքում հազիվ թե տարբերակների թիվը սահմանափակվեր 2-ով (*ռաբ(բ)ունի* (/րաբունի/)-ին կազմվել է *ռաբբի* (/րաբբի/)-ի հիմքից): Հավանական է, որ եբրայական փոխառությունների տարբերակային ձևերից մեկը, թերևս՝ *p* (ր)-ովը, առաջացել է ավելի ուշ և տարբերություն, այլ կերպ՝ տարբեր գրադարձման արդյունք է, իսկ իրանականը խոսակցական լեզվի տարբերակներում (= խոսվածքներում ?) առաջացող ոչ միատեսակ արտասանության արդյունք է, այլ կերպ՝ բարբառային դրսևորում: Ի վերջո, պիտի նկատի ունենալ, որ հայերենի և՛ *n* (ր)-ն, և՛ *p* (ր)-ն առաջացել են հ.-ե. միևնույն **r* ձայնորդ հնչույթից²⁵ և չպիտի բացառել մեկի հնարավոր կիրառությունը մյուսի փոխարեն:

6. Նկատելի է միտում, որ ռնգային *n* (ն)-ին նախորդող դիրքում առավելապես հանդիպում է *n* (ր), իսկ մյուս բաղաձայններին, այդ թվում ռնգային *u* (մ)-

²¹ Օրինակներն ըստ՝ Աճառյան, Հ. ՀԱԲ, հ. IV, էջ 137-139, 443-445, Զահուկյան, Գ. ՀԱԲ, էջ 655-659, 739, ԱԲՀԼ, էջ 708, 794-795, Ղազարեան Ռ., ԳԲ, էջ 1107-1108, 1249:

²² Տե՛ս Աճառյան, Հ. ՀԱԲ, IV, էջ 137, Հյուբշման, Հ. ՀԲ, էջ 375, Զահուկյան, Գ. ՀԱԲ, էջ 655:

²³ Աճառյան, Հ. նույն տեղում:

²⁴ Տե՛ս Աճառյան, Հ. նույն տեղում, էջ 139, Զահուկյան, Գ. նույն տեղում:

²⁵ Տե՛ս Պետրոսյան, Վ. Հին հայերենի *p* (ր), *n* (ր) նայականների և *u* (մ), *n* (ն) ռնգայինների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // «Հայագիտության հարցեր», թիվ 1(13), 2018, էջ 140-147:

ին, և ձայնավորներին նախորդող դիրքում՝ *ր* (*ր*) ձայնորդը (հմմտ. *ամառն*, բայց՝ *ամառան*, այդպես էլ՝ *դունն* - *դուրք* (/դրունք), *դառնամ* - *դարձ*, *եղենն* - *եղեքան*, *ձմենն* - *ձմեքան*, *ձենն* - *ձեքք*²⁶, *մատուռն* - *մատրան*, *ոլոռն* «ոլոռ բույսը. ոլոռի ունդը» - *ոլորան*, *առնեն* - *արարի*, *դառնամ* - *դարձի*²⁷, *ընթենում* - *ընթեքայ*, *ջենում* - *ջեքմն* և այլն): Ինչպես նկատել է պրոֆ. Աղայանը, այս երևույթը կարող էր հիմք տալ խոսելու *ռ* (*ր*)-ի և *ր* (*ր*)-ի միջև նաև դիրքային բաշխվածության, այլ կերպ՝ այլահնչակային հարաբերությունների առկայության մասին, բայց որովհետև այդ միտումը հետևողական չէ՝ որոշ դեպքերում խախտվում է (հմմտ. *ամառան*, *եղենան*, *ոլոռան*), իսկ որոշ դեպքերում էլ պարզապես *ռ* > *ր* անցում տեղի չի ունենում (հմմտ. *զեռումն* «զեռալը» - *զեռման*, *լիսենն* - *լիսռան*, *խուռն* - *խռան*, *ծիծառն* - *ծիծռան*, *ճպուռն* - *ճիպռան*, *ուռն* - *ուռան* և այլն), ապա լրացուցիչ բաշխման հարաբերությունների մասին խոսելու բավարար հիմքեր նույնպես չկան:

7. *Ամառն* // *ամառան*, *դունն* // *դուրք* (/դրունք), *դառնամ* // *դարձ*, *եղենն* // *եղեքան*, *ձմենն* // *ձմեքան*, *ձենն* // *ձեքք*, *մատուռն* // *մատրան*, *ոլոռն* «ոլոռ բույսը. ոլոռի ունդը» // *ոլորան* (ոլորան), *առնեն* // *արարի*, *բառնամ* // *բարձի*, *դառնամ* // *դարձի*, *ընթենում* // *ընթեքայ*, *ջենում* // *ջեքմ* տիպի օրինակները հիմք են տալիս խոսելու *ռ* (*ր*)-ի և *ր* (*ր*)-ի միջև մակարդակային այլ տիպի հարաբերությունների՝ *ձևահնչությաբանական հերթագայությունների* և ըստ այդմ՝ <Ռ(Ր)/Դ(Ր)> *ձևահնչության* (*morphoneme / морфонема*)՝ որպես լեզվական կառուցվածքի ավելի բարձր մակարդակի՝ *ձևահնչությաբանության* (*morphology / морфология*) միավորի մասին²⁸: Նշված օրինակներում *ռ* (*ր*)-ն և *ր* (*ր*)-ն բաղադրում են միևնույն հիմնական ձևային դիրքային տարբերակներից մեկը, այն է՝ հիմքը՝ ա) գոյականի ուղիղ և թեք (սեռ.-տր. և գործ.) հոլովաձևերում (հմմտ. *ամառն* // *ամառան*, *դունն* // *դուրք* (/դրունք), *դառնամ* // *դարձ*, *եղենն* // *եղեքան*, *ձմենն* // *ձմեքան*, *ձենն* // *ձեքք*, *մատուռն* // *մատրան*, *ոլոռն* // *ոլարան*) և բ) բայի խոնարհման՝ ներկայի և անցյալ կատարյալի ձևերում (հմմտ. *առնեն* // *արարի*, *բառնամ* // *բարձի*, *դառնամ* // *դարձի*, *ընթենում* // *ընթեքայ*). *ջենում* // *ջեքմն* հարաբերակցության դեպքում *ռ* // *ր* հերթագայությունը փոխում է նաև խոսքամասային հիմքը՝ առաջացնելով *բայահիմք* - *գոյականական հիմք* առնչություն:

²⁶ Չերք-ը եղել է եզ. գրծ. հին ձևը հայերենում, որից կազմվել են բարդությունները: Գրաբարյան ձևն էր *ձեռամբ* (տե՛ս Աճառյան, Շ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, Կ. III, Եր., 1957, էջ 414):

²⁷ Դառնամի ավելի հին ձևն է **դարձնամ* (< **dhǝǵh-nā-mi*) (տե՛ս Զախուկյան, Գ. ՀԼՊՆԺ, էջ 120), որը ցույց է տալիս, որ *ր* (*ր*)/*ռ* (*ր*) հերթագայությունը տեղի է ունեցել է ձ-ի անկումից հետո, երբ *ր* (*ր*)-ն հայտնվել է *ն* (*ռ*)-ին նախորդող դիրքում:

²⁸ Ձևահնչության և ձևահնչությաբանական հերթագայության մասին տե՛ս Պետրոսյան, Վ. Ձևահնչության և ձևահնչությաբանության լեզվաբանական կարգավիճակը // «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3, 2009, էջ 96-105 (հմմտ. *նույնի*՝ Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 118-130):

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու հետևյալը.

1) Գրաբարյան հայերենի n ($\dot{r}$) և p (r) ձայնորդները այդ լեզվի հնչույթային համակարգի լիարժեք բաղադրիչներ էին, որովհետև գործառական (= հնչույթային) հակադրություններ են ձևավորել բոլոր երեք դիրքերում՝ բառասկզբի, բառամիջի և բառավերջի: Հատկապես վերջին երկուսը հիմնավորվում են բազմաթիվ օրինակներով:

2) Բառասկզբի դիրքում նշված ձայնորդների հնչույթային գործառույթի բացառման մասին միտքը, կարծում ենք, ունեցել է երկու պատճառ. ա) հիմնախնդրի քննությունը համաժամանակյա հայեցակերպից տարածամանակյա հայեցակերպ տեղափոխելը. բ) լեզվական փաստերի ոչ բավարար ուսումնասիրվածությունը:

3) Առանձին դեպքերում n ($\dot{r}$)-ի և p (r)-ի՝ միևնույն դիրքում հանդիպելիությունը ոչ տարբերակիչ գործառույթով հիմք է տալիս խոսելու նաև նրանց միջև գործող *ազատ փոփոխական* հարաբերությունների մասին, թեպետև թույլ արտահայտված:

4) Մի շարք բառերում հերթազալվելով որպես բառարմատի (= հիմնական ձևույթի) դիրքային տարբերակների՝ ձևակների բաղադրիչ՝ n ($\dot{r}$)-ն և p (r)-ն կազմավորում են լեզվական կառուցվածքի ավելի բարձր՝ ձևահնչույթաբանական մակարդակի միավոր՝ $\langle \Omega(\dot{R})/\Gamma(R) \rangle$ ձևահնչույթը:

ВАРДАН ПЕТРОСЯН – Синхронические характеристики сонорных n ($\dot{r}$) и p (r) древнеармянского языка. – Сонорные древнеармянского языка n ($\dot{r}$) и p (r) выполняли фонемную (= смысловоразличительную) функцию не только в позициях в середине и в конце слова, что приняли также предыдущие исследователи (Э.Агаян, Э.Туманян, Г.Мурадян), а также и в начале слова. Исключение фонологической позиции n ($\dot{r}$) и p (r) в начале слова последние обосновывали тем, что исконно армянские слова и древние заимствования не могли начинаться с n ($\dot{r}$) и p (r): они, как правило, получали *аугмент*. Исключением являлось исконно индоевропейское слово *tnlqñ* (< *srung^h-) и некоторые иранские заимствования (ср. *niqñ*, *nihiłiriay*, *niwiłi*, *niñiłi*, *niñiwiñiñi*). Во-первых, при синхроническом аспекте с точки зрения различения фонем неважно, встречается ли фонема в исконном или в составе заимствованного слова, однако появление его в дифференциальной функции хотя бы в нескольких словах достаточно для признания его фонологического статуса. С этой точки зрения есть все основания говорить, что n ($\dot{r}$) и p (r) осуществляли полноценную фонемную функцию в позиции в начале слова. Следовательно, между ними ни в какой позиции не могли быть *аллофонические* отношения. Чередование n ($\dot{r}$) и p (r) в позиционных вариантах (= морфах) некоторых корней (= основных морфем) дает основание говорить о существующих между ними *морфонологических* отношениях, следовательно, о существовании *морфемы* $\langle \Omega/\Gamma \rangle$ ($\langle R/R \rangle$). В отдельном случае речь может идти также о слабо выраженных *свободно варьируемых* отношениях между n ($\dot{r}$) и p (r).

Ключевые слова: *фонема, фонологическая позиция, аллофон, дополнительная дистрибуция, свободное варьирование, морфонема.*

VARDAN PETROSYAN – Synchronic Descriptions of Old Armenian Sonorants n ($\dot{r}$) and p (r). – Old Armenian sonorants n ($\dot{r}$) and p (r) served the function of a phoneme (= a meaningful unit) not only in middle, but also at the end of words. This view was supported by previous

investigators, as well (E. Aghayan; E. Toumanyan; H. Muradyan). They excluded the possibility that the beginning of a word could be a phonological position for the sonorants *n* (r̥) and *ɲ* (r) on the grounds that native Armenian words and old borrowings could not have started with *n* (r̥) and *ɲ* (r). They, as a rule, acquired an augment. Native IE word *mn̥iq* (< **srung*^h-) and certain Iranian borrowings (comp. *nuqil*, *nuhil*իրայ, *nuhil*, *mn̥ihl*, *mn̥uusuunul*) were exceptions to the rule. To begin with, in the synchronic approach the classification of the phonemes does not attach any significance to the fact of whether the given phoneme appears in native or borrowed words. Moreover, the presence of a certain phoneme with a distinctive function in even several words is sufficient to recognize its status as a phoneme. In this regard, there are all grounds to say that the sonorants *n* (r̥) and *ɲ* (r) fully served the function of a phoneme at the beginning of a word, too. As a matter of fact, no *allophonic* relations could exist between them in any position. The order of the *n* (r̥) and *ɲ* (r) sonorants in the positional forms (= *morphs*) of certain word roots (= *main morphemes*) is an indication of *morphonological* relations between them, hence of the existence of the <ɲ/r̥> (<R̥/R>) *morphoneme*. There are also cases of *free variation* relation between *n* (r̥) and *ɲ* (r).

Key words: *phoneme, phonological position, allophone, additional distribution, free variation, morphoneme.*

Գրականության ցանկ

- Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (1988): Անթիլիաս: (Ardzerin bařaran Haykaznean lezui (1988). Ant'illas).
- Ջահուկյան, Գ. (2010): Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան: (Dzahukyan, G. (2010). Hayeren stugabanakan bařaran, Erevan).
- Ջահուկյան, Գ. (1987): Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան: (Dzahukyan, G. (1987). Hayots' lezu'i patmut'yun: nakhagryayin zhamanakashrjan, Erevan).
- Ջահուկյան, Գ. (1954): Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան: (Dzahukyan, G. (1954). K'erakanakan yev ughagrakan ashkhatut'yunnerē hin yev mijnadaryan Hayastanum, Erevan).
- Աղայան, Է. (1964): Գրաբարի քերականություն, Երևան: (Aghayan, E. (1964). Grabari k'erakanut'yun, Erevan).
- Աճառյան, Հ. (1951): Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան: (Ačařyan, H. (1951). Hayots' lezu'i patmut'yun, mas II, Erevan).
- Աճառյան, Հ. (1957): Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան: (Ačařyan, H. (1957). Liakatar k'erakanut'yun hayots' lezu'i, h. III, Erevan).
- Աճառյան, Հ. (1979): ՀԱԲ, հ. IV, Եր.: (Ačařyan, H. (1979) HAB, h. IV, Erevan).
- Աճառյան, Հ. (1971): Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Երևան: (Ačařyan H. (1971). Hayeren armatakan bařaran (aysuherēv — HAB), h. 1, Erevan).
- Հյուբշման, Հ. (2003): Հայերենի քերականություն, Երևան: (Hyubshman, H. (2003). Hayereni k'erakanut'yun, Erevan).
- Մուրադյան, Հ. (1982): Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Երևան: (Muradyan, H. (1982). Hayots' lezu'i patmakan k'erakanut'yun, h. I, Erevan).
- Ղազարեան, Ռ. (2004): Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Անթիլիաս: (Ghazaryan R. (2004). Grabari bařaran (aysuherēv — GB), Ant'illas).
- Նոր բաղկիք հայկազնեան լեզուի (1979): Հ. 1, Երևան: (Nor bařgirk' Haykaznean lezu'i (1979). H. 1, Erevan).
- Պետրոսյան, Վ. (2015): Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան: (Petrosyan, V.

(2015). Ĕndhanur yev hay lezvabanut'yan harts'er, Erevan).

Պետրոսյան, Վ. (2018): Հին հայերենի *ṛ* (*r*), *ṛ* (*ṛ*) նայականների և *u'* (*m*), *u* (*n*) ռնգայինների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // «Հայագիտության հարցեր», թիվ 1(13):

(Petrosyan, V. (2018). Hin hayereni *ṛ* (*ṛ*), *r* (*r*) nayakanneri yev *m* (*m*), *n* (*n*) ṛngayinneri tsagume yev hnch'abanakan arjekaynut'yune // "Hayagitut'yan harts'er", tiv 1(13)).

Պետրոսյան, Վ. (2009): Ձևահնչոյթի և ձևահնչոյթաբանության լեզվաբանական կարգավիճակը // «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3: (Petrosyan, V. (2009). Dzevahnhch'uyti yev dzevahnhch'uyt'abanut'yan lezvabanakan kargavijake // "Banber Yerevani hamalsarani", tiv 3).

Туманян, Э. (1971). Древнеармянский язык. Москва: (Tumanyan, Ĕ. (1971). Drevnearmyanskii yazyk. Moskva).